ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ծնվել է 1951 թ. Էջմիածնի շրջանի Ոսկեհապ գյուղում:

1965 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան, որն ավարտել է 1971 թ. փայլուն առաջադիմությամբ: Հոգևոր Ճեմարանն ավարտելուց հետո մեկ տարի պաշտոնավարել է նույն հարկի տակ՝ որպես վերակացու և դասավանդել Նոր Կտակարան:

1970 թ. Մայր Աթոռում ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1972 թվականին՝ կուսակրոն քահանա: Այնուհետև Երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի բարեհաճ կարգադրությամբ մեկնել է Վիեննա՝ կատարելագործելու ուսումը տեղի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում:

1975 թ. Վեհափառ Հայրապետի հրամանով տեղափոխվել է Գերմանիա՝ իբրև հոգևոր հովիվ, միաժամանակ շարունակել ուսումը Բոննի համալսարանի աստվածաբանության բաժնում:

1979 թ. վերադարձել է Մայր Աթոռ, ապա մեկնել Զագորսկ՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգևոր ակադեմիայի ասպիրանտուրայում ուսանելու:

1980 թ. մարտին Վեհափառ Հայրապետի կողմից պաշտոնի է կոչվել Արարատյան Հայրապետական թեմում՝ որպես առաջնորդական փոխանորդի օգնական, իսկ 1983 թ. ապրիլից՝ հայրապետական կոնդակով նշանակվել նույն թեմի առաջնորդական փոխանորդ:

1983 թ. հոկտեմբերի 23-ին Մայր Տաճարում ձեռնադրվել է եպիսկոպոս: 1992 թ. նոյեմբերին ստացել է արքության պատիվ:

1998 թ. նոյեմբերի 30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի հայրապետական բարձր տնօրինությամբ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը նշանակվել է Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ և վարել Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ընթացիկ գործերը մինչև 1998 թ. հուլիսի 4-ը:

Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը եղել է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ:

1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային-եկեղեցական ժողովը Գարեգին արքեպս. Ներսիսյանին ընտրեց Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոս: